



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 56-Ս

ք.Ստեփանակերտ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՄՆԵՐԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

Ի գիտություն ընդունել «ԼՂՀ ընտրական հանձնաժողովների անդամության թենաձուների 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին անցկացվելիք մասնագիտական դասընթացների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ե.Արզումանյանի տեղեկանքը (կցվում է):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին անցկացվելիք մասնագիտական դասընթացների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին

Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2015թ. փետրվար-մարտ ամիսներին Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում կազմակերպում է մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար, ինչի մասին կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդես է եկել հայտարարությամբ զանգվածային լրատվամիջոցներով («Ազատ Արցախ» հանրապետական թերթ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային հեռուստատեսություն), ինչպես նաև, հայտարարության տեքստը տեղադրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում տեղադրվել է նաև ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների որակավորման ստուգարքի հարցաշարը:

Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից սույն թվականի հունվարի 16-ից սկսվել են դասընթացներին մասնակցելու համար դիմումների ընդունման աշխատանքները: Այս պահի դրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից արդեն ընդունվել են **393** դիմումներ, **84** համայնքներից, այդ թվում՝

Հ/հ	ՏարԸՀ անվանումը	Դիմումների քանակը	Համայնքների քանակը	Ծանոթություն
1.	Ստեփանակերտի ՏարԸՀ	57	1	
2.	Ասկերանի ՏարԸՀ	25	12	
3.	Մարտակերտի ՏարԸՀ	80	30	
4.	Մարտունու ՏարԸՀ	32	8	
5.	Հաղրութի ՏարԸՀ	20	7	
6.	Շուշիի ՏարԸՀ	5	2	
7.	Շահումյանի ՏարԸՀ	16	6	
8.	Քաշաթաղի ՏարԸՀ	158	18	
	Ընդամենը՝	393	84	

Դասընթացներին կարող են մասնակցել ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող ԼՂՀ քաղաքացիները:

Համաձայն ԼՂՀ ընտրական օրենսգրքի դասընթացներին չեն կարող մասնակցել ԱԺ պատգամավորները, դատավորները, դատախազները, նախարարները և նրանց տեղակալները, շրջվարչակազմի ղեկավարները (Ստեփանակերտի քաղաքապետը) և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարներն ու ավագանու անդամները, ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում ծառայողները, զինծառայողները և ԼՂՀ քրեական օրենսգրքի 147-158-րդ

հողվածներով նախատեսված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք:

Ի գիտություն եմ հայտնում բոլոր շահագրգիռ անձանց և մարմիններին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող քաղաքական ուժերին, կուսակցություններին), որ ընտրական հանձնաժողովների անդամության թեկանծուների համար կազմակերպվող մասնագիտական դասընթացներին մասնակցելու համար դիմումների ընդունման աշխատանքները շարունակվում են Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների տարածքային ընտրական հանձնաժողովներում մինչև սույն թվականի փետրվարի 6-ը ներառյալ, աշխատանքային օրերին, ժամը 9:00 -18:00-ն:

Դասընթացների անցկացման վայրի, օրվա և ժամի մասին լրացուցիչ կտեղեկացվի համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից և կհրապարակվի հայտարարություն ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում, դասընթացի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

**ԼՂՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահի տեղակալ**

Ե. Արզումանյան